Ամփոփելով մարտյան վիճակագրությունը և առաջին եռամսյակը

Սևանի համայնքապետարանի ՔԿԱԳ Սևանի տարածքային սպասարկման կենտրոնում ամփոփվել են գարնան առաջին ամսվա և ընթացիկ տարվա 1-ին եռամսյակի վիճակագրությունը:

Սևանի համայնքապետարանը համագործակցում է «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հետ և տվյալներ է ստանում նաև բժշկական կենտրոնում ծնված և ծննդյան վկայական ստացած նորածինների թվային տվյալների վերաբերյալ:

Համաձայն ստացված ամփոփագրերի՝ այս տարվա մարտ ամսին Սևան համայնքում կատարվել է ծննդյան 41 գրանցում, որից Սևանի համայնքապետարանի ՔԿԱԳ Սևանի տարածքային սպասարկման կենտրոնում՝ 19, «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ում՝ 22: Գրանցված 41 ծննդից 28-ը տղա են, 13-ը՝ աղջիկ:

Սևան քաղաքում մարտ ամսին գրանցվել է 21 ծնունդ, Լճաշեն բնակավայրում՝ 6, Դդմաշեն բնակավայրում՝ 1, Ծովագյուղ բնակավայրում՝ 6, Վարսեր բնակավայրում՝ 2, Զովաբեր բնակավայրում՝ 4, Գեղամավան բնակավայրում՝ 1 ծնունդ:

Մարտ ամսին Սևանի համայնքապետարանի աշխատակազմի ՔԿԱԳ սպասարկման կենտրոնում գրանցվել է 12 ամուսնություն, 3 ամուսնալուծություն, տրվել է հայրության որոշման 10 ակտ, 25 կրկնօրինակ, 21 տեղեկանք, կատարվել է ուղղման, փոփոխության 11 գործ, թվայնացվել է 119 ակտ, հարցումների, հաղորդումների թիվը 49 է, փոխման ակտի գրանցման դիմումների թիվը՝ 2:

2023թ.-ի մարտ ամսին գրանցվել 38 մահ:

Մարտ ամսվա ընթացքում հիշյալ գործարքներից համայնքային բյուջե է մուտքագրվել 345000 դրամ տուրք:

2023թվականի 1-ին եռամսյակի վիճակագրությունն այսպիսին է՝

Ծննդյան ակտի գրանցում՝ 92 /Սևանի համայնքապետարանի ՔԿԱԳ Սևանի տարածքային սպասարկման կենտրոն, «Սևանի ԲԿ» ՓԲԸ՝ փետրվար, մարտ ամիսներ/.

Ամուսնության ակտի գրանցում՝ 43, ամուսնալուծության ակտի գրանցում՝ 10, հայրության որոշման ակտի գրանցում՝ 26, ՔԿԱԳ վկայականի կրկնօրինակի տրամադրում՝ 84, տեղեկանքի տրամադրում՝ 80, գրանցումներ, ուղղումներ, փոփոխություններ՝ 27, թվայնացման ակտեր՝ 315, հարցումներ, հաղորդումներ 139, փոխման ակտի գրանցում՝ 3, մահվան ակտի գրանցում՝ 101:

Հունվար-մարտ ամիսների ընթացքում հիշյալ գործարքներից համայնքային բյուջե է մուտքագրվել 1.015.000 դրամ տուրք:

Հիշեցնենք, որ ծննդյան, մահվան և ամուսնության ակտի գրանցման համար պետական տուրք չի գանձվում: